ՀԱՅՈՑ ԴՐՕՇԱԿԸ

—::—

Հին Հայաստանում իւրաքանչիւր նախարարութիւն իր առանձին դրօշը ունէր. այս պարագային համազգային պէտք է համարէին Արարատեան Թագաւորութեան որ է, Արշակունեաց տոհմի դրօշը: Բայց մեր հին պատմագիրները ոչ մի տեղեկութիւն չեն տալիս մեզ, ոչ առանձին Նախարարութեանց եւ ոչ էլ Արշակունեաց դրօշի մասին:

Յայտնի է, որ միայն Մամիկոնեան Նախարարութեան դրօշի վրայ նկարուած էր արծուի եւ աղաւնու պատկեր: Այսպէս Փաւստոս խօսելով այդ Նախարարութեան մասին՝ ասում է. «Աղաւնադրօշք, արծուենչան վարժնականիշք, աներկիւղք քաջասիրտք նահատակք քաջանունք»: Կայ մինչեւ անգամ կարծիք, որ հին ժամանակի դրօշը այժմուան դրօշից բոլորովին տարբեր էր. օրինակի համար բարձր ձողի ծայրը հաստատուած մի քանդակ, վիշապ եւայլն, եւ ոչ թէ շորի վրայ նկարուած պատկեր, ինչպէս այժմ: Այս կարծիքն ունի Միւլէր հայագէտը, որ ուզում է դրօշ բառը դրօշել (քանդակել) բայից հանել:

1198 թուին երբ Լեւոն Բ. Ռուբինեանց Թագաւոր օծուեց, Հռոմի պապը ուղարկեց նրան մի դրօշ, որի վրայ նկարուած էր կարմիր առիւծ, թաթերը վեր բարձրացած, սպիտակ ֆոնի վրայ: Երեւի Լեւոնի յաջորդները պահեցին այդ դրօշը, բայց երբ Ռուբինեան զահի վրայ բազմեց Լուսինեանց տոհմը, դրօշակը փոխուեց եւ դարձաւ եռագոյն՝ կարմիր, կապոյտ, դեղին: Յայտնի է, որ Լեւոն Զ.-ի մահից յետոյ՝ Հայոց Թագաւորութեան ժառանգ համարուեցին Կիպրոսի Լուսինեանները, որոնք Լեւոնի մօտիկ ազգականներն էին, եւ հայ Թագաւորների տիտղոսները իրենց անուան միացրին:

1319 թ. Նոյեմբ. 11ին Տարսոնի Մատթէոս Արք.-ը Հայաստանի անուանական Թագաւոր օծեց Կիպրոսի Լուսինեան Յովհաննէս Բ. Թագաւորին: Կիպրոսի Լուսինեանց դրօշակն էլ իր մէջ առաւ Հայոց դրօշակի գոյները եւ եղաւ սպիտակ, կապոյտ, կարմիր եւ դեղին:

1885 թ. Վիկտոր Հիւգոյի Թաղման հանդէսին, Փարիզի Հայ Ուսանողական Միութիւնը, ուղեւորելով մասնակցիլ հայ ազգային դրօշակով, դիմում է Ալիշանին եւ հարցնում նրանից հայ դրօշակի գոյները: Ալիշանը յայտնում է, թէ Հայոց դրօշակի գոյներն են կարմիր, կանաչ, սպիտակ: Ուսանողները վերցրին այդ գոյները, որոնք յետոյ ընդունուեցան նաեւ Հնչակեան Յեղափոխական Կուսակցութեան կողմից՝ իբրեւ ազգային պաշտօնական դրօշակ:

Ալիշանից է նաեւ գոյների մի երկրորդ դասաւորութիւնը, այն է դեղին, կարմիր, կանաչ կամ կապոյտ, կարմիր, կանաչ, որ ընդունուած է Հայոց կողմից իբրեւ ազգային դրօշակ վերջին համաշխարհային պատերազմի ընթացքում (Ծ. ԽՄԲ. խօսքը՝ 1914-1918ի մասին է): 1918 թ. երբ բոլշեւիկները դրաւեցին Նոր Նախիջեւանը եւ հին սպաներին իրենց բանակն էին մտցնում բռնի, Հայ Սպաների Զինուորական Միութիւնը հրաժարուեց մտնել նրանց բանակը այն պատճառաբանութեամբ, որ իրենք Լենինի հրովարտակի համաձայն Հայաստան պիտի գնան կռուելու Տաճիկների դէմ: Բոլշեւիկները համաձայնեցին եւ Ռուսներից զանազանելու համար՝ պահանջեցին թեւի վրայ կրել Հայոց գոյները, դեղին, կարմիր, կանաչ սկսան կրել հայ սպաները իրենց թեւի վրայ:

Բայց Ալիշանի տուած գոյները կամայական էին: Առաջին դասաւորութիւնը (Հնչակեանների դրօշակը) նա վերցրել էր տօնացոյցից, ըստ որում Զատկի առաջին կիրակին կոչւում է կարմիր, երկրորդը կանաչ: Իսկ երկրորդ դասաւորութիւնը (կամաւորական բանակների դրօշակը) վերցրել է Միածանի գլխաւոր գոյներից: Մեր դրօշակը Աստուած է տուել, ասում է Ալիշանը, այն օրից երբ Մասիսի գագաթին, Նոյի տապանի վրայ ծագել է Ծիածանը:

Նոր Հայկական կառավարութիւնը անշուշտ տեսնելով, թէ շատ անհիմն են Ալիշանի ենթադրութիւնները, մերժել է երկու դասաւորութիւններն էլ, եւ ընդունել Ռուբինեանց թագաւորութեան վերջին շրջանի գոյները, այն է, կարմիր, կապոյտ, դեղին:

Ակադ. ՀՐԱՉԵԱՑ ԱՃԱՌԵԱՆ